

Կրկին բողոքում են դեղերի թանկացումից

Ապրիլ 2, 2013

Կրկին բողոքում են դեղերի թանկացումից

Նարե Հովհաննիսյան

Ուսանողի հայացք



[drugs.jpg](#) [1]

65-ամյա թոշակառու Լաուրա Ստեփանյանը մտահոգություն է հայտնում դեղորայքի շուկայում տիրող թանկացումների վերաբերյալ:

«Մի դեղ չկա, որ թանկացած չլինի: Աստմայի, խոլեստերինի, շաքարի դեղերը... չգիտեմ էլ որն ասեմ», - բողոքում է տիկին Լաուրան: Այս տարվա թանկացումների առաջին ակիբը նա նկատել էր դեռ երկու ամիս առաջ, և այժմ էլ տեսնում է, որ 200-ից 500 դրամով թանկացել են իրեն անհրաժեշտ դեղերը:

Տիկին Լաուրան արդեն 4-րդ տարի է տառապում է շաքարային դիաբետով, ասում է՝ երեխաներն են օգնում, որ կարողանա անհրաժեշտ դեղերը գնել. միայն թոշակով անհնար կլիներ:

Քաղաքի դեղատներում թանկացման հստակ պատճառներ չեն նշում: «Ենթադրում ենք, որ բոլոր թանկացումներն էլ ներկրման ծախսերի հետ են կապված: Եթե, օրինակ դեղը մոտ տարածքից է ներկրվում, ինչը շատ ծախսեր չի պահանջում, հետևաբար ավելի էժան գներով է վաճառվում», - նշում է Երևանի կենտրոնական դեղատներից մեկի աշխատակցուհին:

Իսկ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ» դեղատների ցանցից դեղագործ Նելլի Կարգինյանն էլ ասում է, որ վերջին խոշոր թանկացումները եղել են նախորդ տարվա սեպտեմբերին, իսկ այժմ նման թանկացումներ չկան և աղմուկ բարձրացնելու հիմքեր չի տեսնում:

«Օրվա ընթացքում շատերն են գալիս, հատկապես թոշակառուները, բողոքում են դեղորայքի թանկացումներից, ու այնպես են մեզ հետ վիճում, կարծես մենք ենք թանկացնում դեղերը», - ասում է դեղատան աշխատակցուհին: Նրա խոսքով՝ երբեմն չեն էլ կարողանում հաճախորդներին համոզել, որ իրենք և դեղատան տնօրինությունը թանկացումների հետ որևէ կապ չունեն:

Աղբյուր՝ JNews.am

Թեմատիկ նյութեր

[Amnesty International. Շայաստանի իշխանությունները պետք է հետաքննեն մարդու իրավունքների խախտման դեպքերը](#) [2]

[«Ինտերնետի հայկական տիրույթում բովանդակության գարգացման մասին» ուսումնասիրություն](#) [3]

[Ինչպես լուսաբանել ընտրական և հետընտրական գործընթացները](#) [4]

[«Նա/Նե»-ի հանրային թղթակցի առաջին տեղի մրցանակը տրվեց ԼՀԱ-ի թղթակցին](#) [5]

[Obama World Blog. Վեց խորհուրդ հաջողված բլոգ ունենալու համար](#) [6]

Source URL: <http://www.jnews.am/pills-and-money>

Links:

[1] http://www.jnews.am/files/drugs_0.jpg

- [2] <http://www.jnews.am/amnesty-international-statement-elections-2013>
- [3] <http://www.jnews.am/report-on-content-of-armenian-internet-segment>
- [4] <http://www.jnews.am/covering-elections>
- [5] <http://www.jnews.am/anushik-avetyan-got-nane-media-award>
- [6] <http://www.jnews.am/successful-blogger>